ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունվարի 2021 թվականի N 02 -Ա

«ԿԱՊԱՆԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և հիմք ընդունելով Գ. Սմբատյանի դիմումը.

ո ր ո շ ու մ եմ՝

1. Գրիշա Սմբատյանին 2021թ. հունվարի 14-ից ազատել «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունների կատարումից:

2. 2021թ. հունվարի 14-ից «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար նշանակել նույն ՊՈԱԿ-ի ֆոնդապահ Արմինե Հովհաննիսյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

3. Կազմակերպությունում հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

Մերի Գանդալյան	Մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ(հանձնաժողովի նախագահ)
Թամար Ստեփանյան	մարզպետարանի իրավաբանական բաժնի պետ
Նարինե Աթայան	մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսա-տնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ
Արմինե Հովհաննիսյան	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար,ընդունող:
Գրիշա Սմբատյան	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրենի նախկին պաշտոնակատար, հանձնող:

4. Հանձնաժողովին՝ հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել եռօրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

1/13/2021

X

ՄԵԼԻՔՍԵԹ ՊՈՂՈՍՅԱՆ

Signed by: POGHOSYAN MELIKSET 4108600096

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

2021թ.հունվարի 13
ք. Կապան